ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

# ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԻՋԵՎԱՆ – 2013

# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
## Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

| | |
|---|---|
| 1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը | Տնտեսագիտության տեսություն 080100 |
| 2. Բուհը | Երևանի պետական համալսարան Իջևանի մասնաճյուղ |
| 3. Ծրագիրը հավատարմագրված է | – |
| 4. Շնորհվող որակավորումը | բակալավր |
| 5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին | 2012/13 |
| 6. Ուսումնառության լեզուն | Հայերեն |
| 7. Ուսուցման ձևը | Առկա և հեռակա |

**8. Ծրագրի ընդունելության չափանիշները**

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

**9. Ծրագրի նպատակները**

Ծրագիրը նպատակ ունի.

- ուսանողներին հնարավորություն ընձեռել ստանալու տնտեսագիտության հիմնարար գիտելիքներ և հմտություններ,
- զարգացնել ուսանողի՝ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներն ու գիտելիքները բիզնեսի և տնտեսության պետական կարգավորման ոլորտներում կիրառելու հմտություններ,
- զարգացնել ոչ լրիվ տեղեկատվության առկայության պայմաններում որոշումների կայացման հմտություններ,
- ձևավորել ուսանողի՝ կազմակերպության կառավարմանն առնչվող տնտեսագիտական տվյալների և տեղեկատվության գնա-

հատման, մեկնաբանման և սինթեզման կարողություններ,

- ապահովել ուսանողների համակարգչային գրագիտության, տվյալների վերլուծության քանակական մեթոդների, գրավոր և - բանավոր հաղորդակցման հիմնարար իմացություն, ինչպես նաև խմբի կազմում աշխատելու և մասնագիտական հետագա զարգացման համար ինքնակրթման կարողություններ:

| 10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները | |
|---|---|
| **Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն**<br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը.<br>Ա1. ծանոթ կլինի ժամանակակից տնտեսագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, գլոբալ և լոկալ հիմնախնդիրներին.<br>Ա2. կտիրապետի բարձրագույն մաթեմատիկայի հիմնական գիտելիքներին, վիճակագրության և մաթեմատիկական մոդելավորման մեթոդներին. ինչպես նաև մասնագիտությանն առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին<br>Ա3. ծանոթ կլինի տնտեսագիտական հիմնարար սկզբունքների կիրառություններին ձեռնարկության (միկրո) և ամբողջ տնտեսության (մակրո) մակարդակներում.<br>Ա4. կունենա տնտեսագիտական հիմնարար գիտելիքներ ֆինանսների, հաշվապահութ- | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br>Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա5կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.<br>Ա1, Ա2, Ա3.<br>▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,<br>▪ փոքր խմբերում տարբեր հարցադրումներ և քննարկումներ,<br>▪ գործնական պարապմունքներ.<br>Ա4, Ա5.<br>▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,<br>▪ լաբորատոր աշխատանքներ,<br>▪ գործնական պարապմունքներ.<br>▪ առաջադրանքներ և խմբային նախագծեր.<br><br>**Գնահատման մեթոդները**<br>Ուսանողների Ա1-Ա5 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով. |

| | |
|---|---|
| յան, մարքեթինգի, բանկային գործի, վիճակագրության, տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման և այլ ասպարեզներում:<br>Ա5. կտիրապետի տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման սկզբունքների մասին հիմնարար գիտելիքների: | Ա1, Ա2.<br>▪ Առաջադրանքների կատարման ստուգում,<br>▪ ստուգարքներ<br>▪ ընթացիկ գրավոր և եզրափակիչ բանավոր քննություններ.<br>Ա3-Ա5.<br>▪ Առաջադրանքների կատարման ստուգում,<br>▪ խմբային նախագծերի պաշտպանություն,<br>▪ ստուգարքներ<br>▪ ընթացիկ գրավոր և եզրափակիչ բանավոր քննություններ,<br>▪ բակալավրական ավարտական աշխատանքի պաշտպանություն: |
| **Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**<br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br>Բ1. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով հավաքագրելու, վերլուծելու և մեկնաբանելու տնտեսագիտական տեղեկատվություն,<br>Բ2. տնտեսագիտական ստանդարտ մոդելների հիման վրա ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և քանակական վերլուծության հիմնարար մեթոդների կիրառմամբ կանխա- | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br>Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ5 կարողությունները հետևյալ մեթոդներով.<br>Բ1 – Բ4.<br>▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,<br>▪ լաբորատոր աշխատանքներ,<br>▪ գործնական պարապմունքներ,<br>▪ առաջադրանքներ և խմբային նախագծեր.<br>Բ5.<br>▪ առաջադրանքներ և խմբային նախագծեր, |

| | |
|---|---|
| տեսելու տնտեսական սուբ-յեկտների վարքը, տնտեսական երևույթների և պրոցեսների հնարավոր զարգացումները,<br>Բ3. հաշվարկելու և մեկնաբանելու ձեռնարկության գործունեությանն առնչվող միկրոտնտեսագիտական ցուցանիշները, ֆինանսական, հաշվապահական. մարքեթինգային և այլ տվյալները,<br>Բ4. հարշվարկելու և մեկնաբանելու մակրոտնտեսական ցուցանիշները, կատարել դրանց համադրումներ,<br>Բ5. ծավալելու ինքնուրույն մասնագիտական գործունեություն, ինչպես նաև որոշակի ղեկավարության ներքո իրականացնել հետազոտական աշխատանքներ ակադեմիական, և արդյունաբերական ոլորտներում: | ▪ ուսումնական պրակտիկա,<br>▪ արտադրական պրակտիկա.<br>**Գնահատման մեթոդները**<br>Ուսանողների Բ1-Բ5 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.<br>Բ1-Բ4.<br>▪ Առաջադրանքների կատարման ստուգում,<br>▪ խմբային նախագծերի պաշտպանություն,<br>▪ ստուգարքներ<br>▪ ընթացիկ գրավոր և եզրափակիչ բանավոր քննություններ,<br>Բ5.<br>▪ Առաջադրանքների կատարման ստուգում,<br>▪ խմբային նախագծերի պաշտպանություն<br>▪ բակալավրական ավարտական աշխատանքի պաշտպանություն: |
| **Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**<br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.<br>Գ1. աշխատելու թիմում,<br>Գ2. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու խնդիր և լուծելու,<br>Գ3. տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և վերլուծել,<br>Գ4. բանավոր և գրավոր հաղոր- | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br>Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ6 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով.<br>Գ1 –Գ3.<br>▪ առաջադրանքներ և խմբային նախագծեր,<br>▪ սեմինար պարապմունքներ,<br>▪ գործնական պարապմունքներ,<br>▪ արտադրական պրակտի- |

| | |
|---|---|
| դակցվել մասնագիտական հանրության հետ,<br>Գ5. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը,<br>Գ6. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: | կա,<br>▪ ավարտական աշխատանքի պատրաստում.<br>Գ4-Գ5.<br>▪ օտարալեզու մասնագիտական գրականության ընթերցում<br>▪ համացանցից օգտվելով՝ անհատական հանձնարարությունների կատարում.<br>▪ բանավոր ներկայացումներ,<br>▪ ուսումնական սեմինար.<br>Գ6.<br>▪ դասախոսություններ,<br>▪ սեմինար պարապմունքներ<br>▪ արտադրական և մանկավարժական պրակտիկա:<br>**Գնահատման մեթոդները**<br>Ուսանողների Գ1-Գ6 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.<br>Գ1-Գ6.<br>▪ առաջադրանքների կատարման ստուգում,<br>▪ խմբային նախագծերի պաշտպանություն<br>▪ ռեֆերատների պատրաստում և զեկուցում,<br>▪ անհատական առաջադրանքների կատարման ստուգում,<br>▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն: |

| 11. Ծրագրի կառուցվածքը |
|---|
| 11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը |

Բակալավրի ծրագիրը բաղկացած է 5 հիմնական կրթամասերից՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (36 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (10 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր մասնագիտական (158 կրեդիտ աշխատածավալով) և հատուկ մասնագիտական դասընթացներ (12 կրեդիտ աշխատածավալով), ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (24 կրեդիտ աշխատածավալով):

1. ***Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս***

*Պարտադիր դասընթացներ (32 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

*Կամընտրական դասընթացներ (4 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:

2. ***Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս***

*Պարտադիր դասընթացներ (10 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

3. ***Ընդհանուր մասնագիտական կրթամաս*** *(158 կրեդիտ)*

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը *(158 կրեդիտ)*:

4. ***Հատուկ մասնագիտական կրթամաս*** *(12 կրեդիտ)*

Ապահովում է տվյալ մասնագիտությամբ անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը:

5. ***Կրթական այլ մոդուլներ*** *(24 կրեդիտ)*

Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատաքների կատարում *(4 կրեդիտ)*:

*Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)*

Գործնական աշխատանք է, որի նպատակն է բակալավրերի մոտ

| |
|---|
| զարգացնելու գործնական հմտություններ, աշխատանքային պլանով աշխատելու կարողություններ և այլն:<br>*Ամփոփիչ մասնագիտական քննություն (4 կրեդիտ)*<br>*Ավարտական աշխատանքի պաշտպանություն (12կրեդիտ)*<br>Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ամփոփ հետազոտություն ներկայացնել բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի շրջանակում: |

| **11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ** | | |
|---|---|---|
| *1-ին ուստարի /1-2 կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| ***Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս***<br>▪ 0302/B01. Հայոց լեզու և գրականություն -1 (2 կրեդիտ)<br>▪ 0302/B02. Հայոց լեզու և գրականություն -2 (2 կրեդիտ)<br>▪ 0305/B07. Ռուսաց լեզու -1 (4 կրեդիտ)<br>▪ 0305/B08. Ռուսաց լեզու -2 (4 կրեդիտ)<br>▪ 0305/B04, 0305/B01. Օտար լեզու -1 /Անգլերեն, Ֆրանսերեն/ (4 կրեդիտ)<br>▪ 0305/B05, 0305/B02. Օտար լեզու -2 /Անգլերեն, Ֆրանսերեն/ (4 կրեդիտ)<br>▪ 0301/B01. Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ)<br>▪ 0301/B02. Հայոց պատմութ- | ***Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս***<br>▪ 0102/ B01. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ (2 կրեդիտ) | Առնվազն 60 կրեդիտի կուտակում: |

| | | |
|---|---|---|
| յան հիմնահարցեր-2 (2 կրեդիտ)<br>▪ Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)<br>***Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս***<br>▪ 0101/B02. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ)<br>▪ 0103/B01. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ)<br>***Ընդհանուր մասնագիտական կրթամաս***<br>▪ 0101/ B09. Մաթեմատիկական անալիզ -1 (6 կրեդիտ)<br>▪ 0101/ B10. Մաթեմատիկական անալիզ -2 (6 կրեդիտ)<br>▪ 0201/B02. Տնտեսագիտական տեսություն -1 (6 կրեդիտ)<br>▪ 0201/B03. Տնտեսագիտական տեսություն -2 (4 կրեդիտ)<br>▪ 0101/ B11. Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ (6 կրեդիտ)<br>▪ 0101/B24. Տնտեսական ինֆորմատիկա (2 կրեդիտ) | | |

| Ուստարիներ և ուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *2-րդ ուստարի /3-4 կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |

| | | |
|---|---|---|
| *Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս*<br>▪ 0305/B09, 0305/B06, 0305/B03 Ռուսաց լեզու -3, Անգլերեն -3 կամ Ֆրանսերեն - 3/ (4 կրեդիտ)<br>▪ 0301/ B01. Փիլիսոփայության հիմունքներ (4 կրեդիտ)<br>▪ Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)<br>*Ընդհանուր մասնագիտական կրթամաս*<br>▪ 0201/B04 Տնտեսական պատմություն (4 կրեդիտ)<br>▪ 0101/ B25. Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ (6 կրեդիտ)<br>▪ 0101/ B26. Հավանականություն և կիրառական վիճակագրություն (5 կրեդիտ)<br>▪ 0201/ B11. Ազգային տնտեսություն (4 կրեդիտ)<br>▪ 0201/ B30. Տնտեսական իրավիճակների մոդելավորում (4 կրեդիտ)<br>▪ 0201/ B12. Էկոնոմետրիկա - 1 (2 կրեդիտ)<br>▪ 0201/ B07. Համաշխարհային տնտեսություն (4 կրեդիտ) | *Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս*<br>▪ 0301/ B03. Քաղաքագիտություն կամ 0301/ B04. Իրավագիտություն (2 կրեդիտ)<br><br>▪ 0202/ B01.Մշակութաբանություն կամ 0301/ B06.Կրոնների պատմություն (2 կրեդիտ) | Առնվազն 58 կրեդիտի կուտակում: |

| | | |
|---|---|---|
| ▪ 0201/B28, 0201/B28, 0201/B28 Գործավարություն օտար լեզվով /անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն/ (4 կրեդիտ)<br>▪ 0303/B39 Տնտեսագիտական սոցիոլոգիա (3 կրեդիտ)<br>▪ 0201/B13 Վիճակագրություն (5 կրեդիտ)<br>▪ 0101/B21 Համակարգչային պրակտիկում (3 կրեդիտ)<br>***Կրթական այլ մոդուլներ***<br>Կուրսային աշխատանք (2 կրեդիտ) | | |

| Ուստարիներ և ուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *3-րդ ուստարի /5-6կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| ***Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս***<br>▪ Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)<br>***Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս***<br>▪ 0001/ B01. Քաղաքացիական պաշտպանություն (2 կրեդիտ)<br>▪ 0001/ B02. Արտակարգ իրավիճակներում բնակ- | ***Հատուկ մասնագիտական կրթամաս***<br>▪ *Հետևյալ 6 դասընթացներից մեկը՝ ուսանողի ընտրությամբ (3 կրեդիտ).*<br>0201/ B36. Սպառողական վարքի տեսություն<br>0201/ B20. Ֆինանսական շուկաներ<br>0201/ B33. Անցու- | Առնվազն 62 կրեդիտի կուտակում: |

| | | |
|---|---|---|
| չության առաջին բուժօգնություն (2 կրեդիտ)<br>***Ընդհանուր մասնագիտական կրթամաս***<br>▪ 0201/B05. Տնտեսագիտական մտքի պատմություն (6 կրեդիտ)<br>▪ 0201/B08. Միջազգային տնտեսագիտություն (4 կրեդիտ)<br>▪ 0201/B09. Միկրոտնտեսագիտություն (6 կրեդիտ)<br>▪ 0201/B27. Էկոնոմետրիկա - 2 (4 կրեդիտ)<br>▪ 0201/B14. Ծառայությունների ոլորտի էկոնոմիկա (2 կրեդիտ)<br>▪ 0201/B15. Ագրարային սեկտորի էկոնոմիկա (4 կրեդիտ)<br>▪ 0201/B16. Ձեռնարկության էկոնոմիկա (4 կրեդիտ)<br>▪ 0201/B19. Հաշվապահական հաշվառում (6 կրեդիտ)<br>▪ 0201/B10. Մակրոտնտեսագիտություն (6 կրեդիտ)<br>▪ 0201/B21. Ֆինանսներ - 1 (4 կրեդիտ)<br>***Կրթական այլ մոդուլներ***<br>▪ Կուրսային աշխատանք (2 կրեդիտ)<br>▪ Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ) | մային տնտեսության տեսություն<br>0201/ B37. Օպտիմալ կառավարում<br>0201/ B38. Էլեկտրոնային առևտուր<br>0201/ B39. Գրաֆների տեսության կիրառությունները տնտեսագիտությունում<br><br>▪ *Հետևյալ 6 դասընթացներից մեկը՝ ուսանողի ընտրությամբ (3 կրեդիտ).*<br>0201/ B54. Ինստիտուցիոնալ տնտեսագիտություն<br>0201/ B40. Աղքատության մակարդակի կրճատման հիմնահարցեր<br>0201/ B41. Մարդկային զարգացման հիմունքներ<br>0201/ B42. Անշարժ գույքի գնահատում<br>0201/ B43. Էկոնոմետրիկական մեթոդների կիրառությունները տնտեսագիտական վերլուծութ- | |

| | | |
|---|---|---|
| | յուններում<br>0201/ B44. Սոցիալ տնտեսական գործընթացների կանխատեսման մեթոդներ և մոդելներ | |

| Ուստարիներ և ուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *4-րդ ուստարի /7-8կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| ***Ընդհանուր մասնագիտական կրթամաս***<br>▪ 0201/B22. Բանկային գործ (5 կրեդիտ)<br>▪ 0201/B23. Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա (6 կրեդիտ)<br>▪ 0201/B25. Մենեջմենթ (6 կրեդիտ)<br>▪ 0201/B26. Մարքեթինգ (5 կրեդիտ)<br>▪ 0201/B24. Ֆինանսներ - 2 (5 կրեդիտ)<br>▪ 0201/B17. Տնտեսության պետական կարգավորում (6 կրեդիտ)<br>▪ 0201/B18. Բիզնեսի կազմակերպում և կառավարում (5 կրեդիտ)<br><br>***Կրթական այլ մոդուլներ***<br>▪ Ամփոփիչ մասնագիտական քննություն (4 | ***Հատուկ մասնագիտական կրթամաս***<br>▪ *Հետևյալ 6 դասընթացներից մեկը ՝ ուսանողի ընտրությամբ (3 կրեդիտ).*<br>0201/ B46. Միջազգային տնտեսական հարաբերություններ<br>0201/ B47. Միջազգային տնտեսական կառույցներ<br>0201/ B45. Բանկային նոր տեխնոլոգիաներ<br>0201/ B29. Տնտեսական գործունեության վերլուծություն<br>0201/ B35. Ինովացիոն մենեջմենթ<br>0201/ B48. Ռազմավարական կառավարում<br><br>▪ *Հետևյալ 6 դասընթացներից մեկը ՝ ուսանո-* | Առնվազն 240 կրեդիտի կուտակում<br><br>Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00: |

| | | |
|---|---|---|
| կրեդիտ)<br>▪ Ավարտական աշխատանք (12 կրեդիտ) | *դի ընտրությամբ (3 կրեդիտ).*<br>0201/ B49. Միջազգային բիզնեսի հիմունքներ<br>0201/ B50. Արտաքին առևտրատնտեսական կապեր<br>0201/ B51. Պետական ֆինանսական համակարգ<br>0201/ B34. Կառավարչական հաշվառման հիմունքներ<br>0201/ B52. Նախագծերի կառավարում<br>0201/ B53. Գիտելիքի էկոնոմիկա | |

11. 2. Պրակտիկայի հնարավորությունները և պայմանները

Պրակտիկաները կազմակերպվում են պրակտիկայի ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող են իրականացվել ինչպես ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների և նախագծերի շրջանակներում, այնպես էլ մասնավոր հատվածի ձեռնարկություններում, ՀՀ կենտրոնական բանկում, նախարարություններում և գերատեսչություններում:

**11.3. Ավարտական ատեստավորումներ**

| Ուստարի | Անվանումը |
|---|---|
| 4-րդ ուստարի | Ավարտական ամփոփիչ քննություն<br>Բակալավրի ավարտական աշխատանքի պաշտպանություն |

**12. Ուսումնական պլանի քարտեզը**

Կցված է

**13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ**

Տե՛ս «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք», Երևան, 2011 թ., էջ 14-20:

**14. Ապագա կարիերայի հնարավորությունները**

«Տնտեսագիտության տեսություն» ծրագիրն ապահովում է համապատասխան ակադեմիական բազա այն ուսանողների համար, ովքեր մտադիր են իրենց ապագա կարիերան կառուցել բիզնեսի, կոմերցիայի, ֆինանսների, կազմակերպությունների կառավարման, հանրային կառավարման ոլորտներում:

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկություններում, առևտրային բանկերում, խորհրդատվական ընկերություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

*Խորհրդատվական ընկերություններ*

- Վիճակագրական տվյալների վերլուծաբան.
- ձեռնարկության օպտիմալ ռազմավարության մշակման փորձագետ
- ֆինանսական խորհրդատու

*Ձեռնարկություններ*

- տնտեսագետ,
- հաշվապահ,
- մարքեթոլոգ,
- ֆինանսիստ
- մենեջեր:

*Առևտրային բանկեր*

- վարկային մասնագետ
- ռիսկերի կառավարման մասնագետ,
- հաշվապահ,
- ակտիվների և պասիվների կառավարման մասնագետ
- մարքեթոլոգ
- արդյունքների վիճակագրական վերլուծությունների մասնագետ:

*Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ*

- տնտեսագետ,
- վիճակագրական տվյալների վերլուծաբան,
- ֆինանսիստ
- հաշվապահ
- տնտեսական քաղաքականության ծրագրերի մշակման խմբի անդամ,
- տնտեսական նախագծերի մշակման, դրանց արդյունավետության գնահատման և իրականացման վերահսկողության գծով մասնագետ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում:

**15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)**

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով ապահոված համակարգչային լսարաններ,
- հեռուսուցմամբ և առցանց դասախոսություններ,
- գրականության էլեկտրոնային ռեսուրսներ:

| | |
|---|---|
| **16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը** | • Պետական կրթական չափորոշիչ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ.<br>• ՀՀ կրթական որակավորումների ազգային շրջանակ. |

**17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ**

- Объязательные компетенции ФГОС ВПО бакалавров по направлению “Экономика” Российской Федерации.
- Каталог учебных программ экономического факультета МГУ программы бакалавров по направлению “Экономика”.
- Middlex University. Programme Specification and Curriculum Map for BSc Honours Business Economics 2009-2010;
- The framework of qualifications for the European Higher Education Area, 2010:

## 18. Լրացուցիչ տեղեկատվություն

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի բակալավրիատում իրականացվում է մեկ կրթական ծրագիր՝ «Տնտեսագիտության տեսություն»:

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի միջին բնութագրական ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ ԻՄ դասընթացների տեղեկագրքում:

## Ծրագրի կրթական վերջնարդյունքները

| Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն | | Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ | |
|---|---|---|---|
| Ա1 | Ժամանակակից տնտեսագիտության հիմնական սկզբունքների և հայեցակարգերի, գլոբալ և լոկալ հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիք | Գ1 | Թիմում աշխատելու կարողություն |
| Ա2 | Բարձրագույն մաթեմատիկայի հիմնական գիտելիքների, վիճակագրության և մաթեմատիկական մոդելավորման մեթոդների, ինչպես նաև մասնագիտությանն առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների իմացություն | Գ2 | Գիտելիքները պրակտիկայում կիրառելու, խնդիրներ ձևակերպելու և լուծելու կարողություններ |
| Ա3 | Ձեռնարկության (միկրո) և ամբողջ տնտեսության (մակրո) մակարդակներում տնտեսագիտական հիմնարար սկզբունքների՝ կիրառությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք | Գ3 | Տարբեր աղբյուրներից տեղեկատվություն հայթայթելու և վերլուծելու հմտություններ |
| Ա4 | Ֆինանսների, հաշվապահության, մարքեթինգի, բանկային գործի, վիճակագրության, տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման և այլ ասպարեզներում տնտեսագիտական հիմնարար գիտելիք | Գ4 | Հանրության հետ բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական կարողություն |
| Ա5 | Տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման սկզբունքների իմացություն: | Գ5 | Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանավոր և գրավոր խոսքը կառուցելու կարողություններ, |
| **Բ. Գործնական մասնագիտական կարողություններ** | | Գ6 | Մասնագիտական էթիկայի նորմերը պահպանելու կարողություններ: |
| Բ1 | Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տնտեսագիտական տեղեկատվությունը հավաքագրելու, վերլուծելու և մեկնաբանելու կարողություն | Բ3 | Ձեռնարկության գործունեությանն առընչվող միկրոտնտեսագիտական ցուցանիշները, ինչպես նաև ֆինանսական, հաշվապահական. մարքեթինգային և այլ տվյալները հաշվարկելու և մեկնաբանելու կարողություն: |
| Բ2 | Տնտեսագիտական ստանդարտ մոդելների հիման վրա տնտեսական սուբյեկտների վարքը, տնտեսական երևույթների և պրոցեսների հնարավոր զարգացումները կանխատեսելու ունակություն | Բ4 | Մակրոտնտեսական ցուցանիշները հաշվարկելու, մեկնաբանելու և դրանց որոշակի համադրումներ կատարելու կարողություն |
| Բ5 | Ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու, ինչպես նաև որոշակի ղեկավարության ներքո ակադեմիական, և արդյունաբերական ոլորտներում հետազոտական աշխատանքներ իրականացնելու ունակություն: | | |

| Ծրագրի կրթական վերջնարդյունքները | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա1 | Ա2 | Ա3 | Ա4 | Ա5 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Գ1 | Գ2 | Գ3 | Գ4 | Գ5 | Գ6 |
| Ուստարին, որի ավարտին կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում բոլոր ուսանողների կողմից: | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 4 | 2 | 3 | 4 | 4 | 4 | 2 | 4 | 3 | 4 | 1 | 2 |

| Ուսումնական մոդուլի անվանումը | Մոդուլի կրեդիտը | Ծրագրի կրթական վերջնարդյունքները | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ա1 | Ա2 | Ա3 | Ա4 | Ա5 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Գ1 | Գ2 | Գ3 | Գ4 | Գ5 | Գ6 |
| *Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս* | | | | | | | | | | | | | | | | | |
| **Պարտադիր դասընթացներ** | | | | | | | | | | | + | | | | + | + | |
| Հայոց լեզու և գրականություն - 1 | **4** | | | | | | | | | | + | | | | + | + | |
| Հայոց լեզու և գրականություն - 2 | **4** | | | | | | | | | | + | | | | + | + | |
| Ռուսաց լեզու - 1 | **4** | | | | | | | | | | + | | | | + | + | |
| Ռուսաց լեզու - 2 | **4** | | | | | | | | | | + | | | | + | + | |
| Օտար լեզու - 1 | **4** | | | | | | | | | | + | | | | + | + | |
| Օտար լեզու - 2 | **4** | | | | | | | | | | + | | | | + | + | |
| Օտար լեզու – 3 /Ռուսաց լեզու – 3 | **4** | | | | | | | | | | + | | | | + | + | |
| Հայոց պատմության հիմնահարցեր - 1 | **2** | | | | | | | | | | | | | + | | | + |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայոց պատմության հիմնահարցեր - 2 | 2 | | | | | | | | | | | | | + | | | + |
| Փիլիսոփայության հիմունքներ | 4 | + | | | | | | | | | | | | | + | + | + |
| Ֆիզդաստիարակություն | 0 | | | | | | | | | | | | | | | | |
| **Կամընտրական դասընթացներ** | | | | | | | | | | | | | | | | | |
| Քաղաքագիտություն | 2 | | | | | | | | | | | + | | | + | | + |
| Իրավագիտություն | | | | | | | | | | | | | | | + | | + |
| Մշակութաբանություն | 2 | | | | | | | | | | | | | | + | | + |
| Կրոնների պատմություն | | | | | | | | | | | | | | | + | | + |
| ***Ընդհանուր մաթեմա-տիկական և բնագիտական կրթամաս*** | | | | | | | | | | | | | | | | | |
| Համակարգչից օգտվելու հ-մտություններ | 2 | | + | + | | | + | + | | | | | | + | | | |
| Քաղաքացիական պաշտպանություն | 2 | | | | | | | | | | | | | | | | + |
| Արտակարգ իրավիճակնե-րում բնակչության առաջին բուժօգնություն | 2 | | | | | | | | | | | | | | | | + |
| Էկոլոգիայի և բնապահպա-նության հիմունքներ | 2 | | + | | | | | | | | | | | | | | + |
| Բնագիտության ժամանակա-կից կոնցեպցիաներ | 2 | | + | | | | | | | | | | | | | | + |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Ընդհանուր մասնագիտական կրթամաս* | | | | | | | | | | | | | | | | | |
| Մաթեմատիկական անալիզ - 1 | **6** | | + | | | | | | | | | | + | | | | |
| Տնտեսագիտական տեսություն -1 | **6** | + | | + | | | | | | | | | | | | | |
| Մաթեմատիկական անալիզ - 2 | **6** | | + | | | | | | | | | | + | | | | |
| Վերլուծական երկրաչափու-թյուն և գծային հանրահաշիվ | **6** | | + | | | | | | | | | | + | | | | |
| Տնտեսագիտական - տեսություն -2 | **4** | + | | + | | | | | | | | | | | | | |
| Տնտեսական ինֆորմատիկա | **2** | | + | | | | + | | | | | | | | | | |
| Տնտեսական պատմություն | **4** | + | | | | | + | + | | | | | | | | | |
| Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ | **6** | | + | | | | + | + | | | | | | | | | |
| Հավանականություն և կիրա-ռական վիճակագրություն | **5** | | + | | | | | | | | | | + | | | | |
| Ազգային տնտեսություն | **4** | + | | + | | | + | | | | | | | | | | |
| Տնտեսական իրավիճակների մոդելավորում | **4** | | + | | + | | + | + | | | + | | + | | | | |
| Տնտեսագիտական մտքի պատմություն | **6** | | + | | + | | + | + | | | + | | + | | + | + | |
| Համաշխարհային տնտեսու-թյուն | **4** | + | | | | | + | | | + | | + | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գործավարություն օտար լեզվով | 4 | | | | | | | | | | + | | + | | | | + |
| Տնտեսագիտական սոցիոլոգիա | 3 | + | + | | + | | + | + | | | | | | | + | | |
| Վիճակագրություն | 5 | | + | + | + | | | + | + | + | | + | | | + | | |
| Համակարգչային պրակտիկ-ում | 3 | | + | | | | + | + | | | | | | | + | | |
| Միջազգային տնտեսագի-տություն | 4 | | | + | | + | + | | | + | | + | | | | | |
| Միկրոտնտեսագիտություն | 6 | | | + | | + | + | + | | | | | | | | | |
| Էկոնոմետրիկա -1 | 2 | | + | | | | + | + | | | | | | | + | + | |
| Ծառայությունների ոլորտի էկոնոմիկա | 2 | | | + | | | + | | + | | | | | | | + | |
| Ագրարային սեկտորի էկոն-ոմիկա | 4 | | | + | | | + | | + | | | | | | | + | |
| Ձեռնարկության էկոնոմիկա | 4 | | | + | + | | + | + | + | | | | | | | | |
| Հաշվապահական հ-աշվառում | 6 | | | | + | | + | | + | | | | | | | + | |
| Մակրոտնտեսագիտություն | 6 | | | + | | + | | + | | + | | + | | | | | |
| Էկոնոմետրիկա -2 | 4 | | + | | | | + | + | | | | | | | + | + | |
| Ֆինանսներ -1 | 4 | | | | + | + | + | | + | | | | | | | | |
| Բանկային գործ | 5 | | | | + | + | + | | + | | | | | | | | |
| Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա | 6 | | | | | + | + | | + | | | | | + | | | |
| Մենեջմենթ | 6 | | | | | + | + | | + | | | | | + | | + | |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մարքեթինգ | **5** | | | | + | | + | + | + | | | | | | | | |
| Ֆինանսներ -2 | **5** | | | | + | + | | | + | + | | + | | | | | |
| Տնտեսության պետական կարգավորում | **6** | | | | + | + | + | + | | + | | + | | | | | |
| Բիզնեսի կազմակերպում և կառավարում | **5** | | | | + | + | | + | + | | | | | + | | + | |
| Կուրսային աշխատանք - 1 | **2** | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | | + | + | |
| Կուրսային աշխատանք - 2 | **2** | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | | + | + | |
| **Արտադրական պրակտիկա** | **4** | | | | | | | | + | | + | | + | + | + | | + |
| **Ավարտական աշխատանք** | **12** | | | | | | | | | | | | | + | + | + | |
| **Ավարտական ամփոփիչ քննություն** | **4** | | | | | | | | | | | | | + | + | + | + |

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

## ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

| 0302/B01 | Հայոց լեզու և գրականություն - 1 | 2 կրեդիտ |
|---|---|---|
| 2 ժամ | 8/24/0 | |
| 1-ին կիսամյակ | Ստուգարք | |

Դասընթացի նպատակն է ժամանակակից հայերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության համակարգերի ուսուցումը նպատակաուղղել խոսքի մշակույթի զարգացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների - ամրակայմանը:

*Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.*

*Գիտելիք և իմացություն*

- **կիմանա ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները.**
- **ծանոթ կլինի հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին:**

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **ճիշտ գործածելու մասնագիտական բառապաշարը, տերմինաբանությունը,**
- **գործնականում կիրառելու լեզվաոճական հնարներ:**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **կկարողանա գրական հայերենով շարադրել մտքերը:**

*Համառոտ բովանդակությունը*

***Թեմա 1՝*** Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման - փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում*:* Հայ հին գրականություն: ***Թեմա 2՝*** Հնչյունաբանություն*: Հայերենի* հնչյունական համակարգը: Ուղղագրություն և ուղղախոսություն: ***Թեմա 3*** Բառագիտություն: Ստուգաբանություն, իմաստաբանություն, բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն: ***Թեմա 4՝*** Ոճերի դասակարգումը: Հայ միջնադարյան գրականություն:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

Ստուգարքն անցկացվում է նախօրոք տրվող ստուգարքային թելադրության դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

*Հիմնական գրականության ցանկը*

| |
|---|
| 1. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Եր., 2010թ<br>2. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2004թ.<br>3. Սարգսյան Ա., Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց, Եր., 2007թ.<br>4. Աղաջանյան Զ., Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2009թ.: |

| **0302/B02** | **Հայոց լեզու և գրականություն - 2** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ** | **8/24/0** | |
| **2-րդ կիսամյակ** | **Հանրագումարային քննություն** | |
| Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին: | | |
| ***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները.**<br>• **ծանոթ կլինի հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **ճիշտ գործածելու քերականական ձևերը**<br>• **գործնականում կիրառելու ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարարներ**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **կկարողանա վարելու երկխոսություն և բանավեճ,**<br>• **կկարողանա կատարելու քննական վերլուծություններ:** | | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>***Թեմա 1՝*** Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: ***Թեմա 2՝*** Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Հայ նոր գրականություն: ***Թեմա 3՝*** Շարահյուսություն. Պարզ նախադասություն: Հայ նորագույն գրականություն: ***Թեմա 4՝*** Բարդ նախադասություն. փոխակերպում և | | |

| |
|---|
| դերբայական դարձված: Ուղղակի և անուղղակի խոսք: Ժամանակակից հայերենի կետադրությունը: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Քննությունն անցկացվում է բանավոր՝ նախաքննական թելադրության դրական արդյունքի դեպքում: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր: Առաջին երկու հարցերը հայոց լեզվին վերաբերող տեսական հարցեր են, երրորդը՝ հայ գրականությանը վերաբերող հարց, չորրորդը՝ գործնական առաջադրանք: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Եր., 2010թ.,<br>2. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2004թ.,<br>3. Սարգսյան Ա., Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց, Եր., 2007թ.,<br>4. Աղաջանյան Զ., Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2009թ.: |

| **0305/B07** | **Ռուսաց լեզու-1** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **1 կիսամյակ** | **Ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի տիրապետումը ռուսաց լեզվի համակարգին, ապահովել բանավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակությունները՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում: | | |
| ***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **ռուսաց լեզվի քերականական կառուցվածքի տիրապետելու ոլորտում:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **գրագիտորեն կազմելու իր բանավոր խոսքը:**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **մասնակցելու տարաբնույթ երկխոսությունների:** | | |
| ***Համառոտ բովանդակությունը*** | | |

| |
|---|
| ***Թեմա 1*՝** Լեզվի դերը հասարակության կյանքում: Ժամանակակից ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում: ***Թեմա 2*՝** Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: ***Թեմա 3*՝** Բառագիտություն. պատկերացում բառիմաստի մասին. միիմաստ և բազմիմաստ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստը, հոմանիշներ և հականիշներ, համանուններ և հարանուններ: ***Թեմա 4*՝** Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: ***Թեմա 5*՝** Շարահյուսություն. շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Լ.Մ. Մկրտչյան, ՌԻսումնական ձեռնարկ, Երևան, 2003թ.: |

| | | |
|---|---|---|
| 0305/B08 | Ռուսաց լեզու-2 | 4 կրեդիտ |
| 4 ժամ | 0/64/0 | |
| 2-րդ կիսամյակ | Ստուգարք | |
| ասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում: | | |
| ***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական կանոնների վերաբերյալ,**<br>• **մասնագիտական լեզվի տերմինաբանության ոլորտում:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **կատարելու մասնագիտական տեքստի շարահյուսական վեր-** | | |

| |
|---|
| լուծություն՝ ելնելով այդ տեքստերին բնորոշ շարահյուսական կառույցների առանձնահատկությունները, <br>• **վերլուծելու և վերարտադրելու մասնագիտական տեքստը:** <br>✓ *(ընդհանրական կարողություններ)* <br>• **կկարողանա թարգմանել մասնգիտական տեքստը հայերենից ռուսերեն:** |
| *Համառոտ բովանդակությունը* <br>***Թեմա 1***՝ Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը: ***Թեմա 2***՝ Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: ***Թեմա 3***՝ Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: ***Թեմա 4***՝ Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: ***Թեմա 5***՝ Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները* <br>Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա: |
| *Հիմնական գրականության ցանկը* <br>1. Լ.Մ. Մկրտչյան, ՌԻսումնական ձեռնարկ, Երևան, 2003թ. <br>2. Է.Ս. Վարդումյան, Ռուսաց լեզվի ձեռնարկ տնտեսագիտական բուհի համար, Եր., 2010թ. |

| **0305/B04** | **Անգլերեն -1** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **1 կիսամյակ** | **Ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել): | | |
| ***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.*** <br>*Գիտելիք և իմացություն* <br>• **անգլերեն քերականության հիմնական դրույթների և բառային** | | |

|  |
|---|
| **ֆոնդի վերաբերյալ**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հըմտություններ:**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **կմասնակցի տարաբնույթ երկխոսությունների:** |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>***Թեմա 1՝*** Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: ***Թեմա 2՝*** Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): ***Թեմա 3՝*** Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): ***Թեմա 4՝*** Առաջարկվող թեմաներ. «Ընտանիք», «Ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երազանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը», «Շրջակա միջավայրը և նրա պահպանումը», «Հանրամշակութային երևույթներ» և այլն: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Մխիթարյան Ե., Հիմնական անգլերեն համալսարանի ուսանողների համար, Երևան, 2008թ.<br>2. Գասպարյան Ն., Մանուկյան Գ., Անգլերենի դասագիրք ձեզ համար, մաս 2, Երևան, 2008թ.<br>3. Ցվետկովա Ի., Անգլերեն լեզու /ազատ թեմաներ և տեքստեր/, Մոսկվա, 2006թ. |

| **0305/B05** | **Անգլերեն -2** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **2-րդ կիսամյակ** | **Ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտե- | | |

լիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր մասնագիտական բառապաշարին:

***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.***

*Գիտելիք և իմացություն*

- **կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա,**

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **կկարողանա ընկալել ունկնդրված /կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից/,**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինաբանական համակարգին:**

***Համառոտ բովանդակությունը***

***Թեմա 1՝*** Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: ***Թեմա 2՝*** Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: ***Թեմա 3՝*** Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: ***Թեմա 4՝*** Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին: ***Թեմա 5՝*** Մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգ:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

***Հիմնական գրականության ցանկը***


1. Մխիթարյան Ե., Հիմնական անգլերեն համալսարանի ուսանողների համար, Երևան, 2008թ.
2. Ս. Ա. Շնեյնա, Տնտեսագիտության հիմունքներ և բիզնես, Մոսկ-

| |
|---|
| վա, 1996թ.<br>3. Ս. Թ. Զատիկյան, Տնտեսագիտություն և բիզնես, Երևան, 1992թ. |

| **0305/B01** | **Ֆրանսերեն-1** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **1 կիսամյակ** | **Ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար: | | |
| ***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **ֆանսերենի քերականության հիմնական դրույթների և բառային ֆոնդի վերաբերյալ:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը:**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **վարելու երկխոսություններ, կատարելու համապատասխան տեքստերի վերարտադրություն:** | | |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>***Թեմա 1՝*** Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. ***Թեմա 2՝*** Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: ***Թեմա 3՝*** Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: ***Թեմա 4՝*** Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: ***Թեմա 5՝*** Քանակական և դասական թվական: Քանակական թվականի գործածությունը: ***Թեմա 6՝*** Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ: | | |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները*** | | |

| |
|---|
| Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Պոպովա Ն, Կազակովա Գ., Ֆրանսերենի ձեռնարկ, Մոսկվա, 2006թ.<br>2. Մոժե Գ., Ֆրանսերեն լեզվի և քաղաքակրթության կուրս, Փարիզ, 1992թ.<br>3. Ջուհակյան Մ. Մելիքսեթյան Ռ., Մուրադյան Ա., Ֆրանսերենի ձեռնարկ, Երևան, 2005թ. |

| 0305/B02 | Ֆրանսերեն-2 | 4 կրեդիտ |
|---|---|---|
| 4 ժամ | 0/64/0 | |
| 2-րդ կիսամյակ | Ստուգարք | |
| Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ: | | |
| ***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ),**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստ:**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **կկարողանա զրույց վարել անցած թեմաներով:** | | |
| *Համառոտ բովանդակություն*<br>***Թեմա 1՝*** Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les fu-nerailles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cour-fleurs, des casse-croute և այլն): ***Թեմա 2՝*** Ածականի իմաստի փոփոխությունը կախված նրա դիրքից՝un homme grand-un grand homme. Անորոշ դերանվանական ածական- | | |

| |
|---|
| ներ: ***Թեմա 3՝*** Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, lequel և այլն (դասակարգում): ***Թեմա 4՝*** Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղձական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Alfred Fontenilles, Mark Heimerdinger <La vie des affaires> 2001, Paris.<br>2. Sona Hovhannissyan <Le francais commercial> 2005, Erevan.<br>3. Susanna Khatchatrian, Amalia Mouradian <L home et son environnement>, 2009, Erevan. |

| | | |
|---|---|---|
| **0305/B09** | **Ռուսաց լեզու-3** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **3 -րդ կիսամյակ** | **Հանրագումարային քննություն** | |
| Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվային հմտությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվին և ազատ օգտվելը մասնագիտական գրականությունից: | | |
| ***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **ազատ կտիրապետի մասնագիտական լեզվի տերմինաբանային համակարգին:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստեր,**<br>• **ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով:**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **կկարողանա կազմել զեկույցներ և ռեֆերատներ մասնագիտական թեմաներով,**<br>• **կկարողանա թարգմանել տարբեր բարդության մասնագիտա-** | | |

| |
|---|
| կան տեքստեր: |
| *Համառոտ բովանդակությունը*<br>***Թեմա 1՝*** Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման մի-ջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: ***Թեմա 2՝*** Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները: ***Թեմա 3՝*** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրներ. ***Թեմա 4՝*** Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքներ: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Է.Ս. Վարդումյան, Ռուսաց լեզվի ձեռնարկ տնտեսագիտական բուհի համար, Եր., 2012թ. |

| **0305/B06** | **Անգլերեն-3** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **3-րդ կիսամյակ** | **Հանրագումարային քննություն** | |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Փիլիպոսյան Վ.Ա., Օհնիկյան Հ.Հ. Վերլուծական երկրաչափության խնդրագիրք, ԵՊՀ, Երևան 2011թ.<br>2. Д.В. Беклемишев Курс аналитической геометрии и линейной алгебры, ФИЗМАТЛИТ 2005г.<br>3. О.Н. Цубербиллер Задачи и упражнения по аналитической геометрии, издательство <Лань>, 3 –е изд. Москва 2003,.<br>4. Н.В. Ефимов Краткой курс аналитической геометрии ФИЗМАТЛИТ 2005г. |

| **0101/B24** | **Տնտեսական ինֆորմատիկա** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ** | **16/16/0** | |
| **2-րդ կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց** | |
| Դասընթացի նպատակն է, ուսանողներին հաղորդել ծրագրային փաթեթների միջոցով տնտեսական ինֆորմացիայի մշակման գիտելիքներ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **ծանոթ կլինի տնտեսական ինֆորմացիայի ծրագրային մշակման սկզբունքներին և առանձնահատկություններին,**<br>• **կտիրապետի տիպային ծրագրավորման փաթեթներին:**<br>*Ունակ կլինի* | | |

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- **կատարելու տնտեսագիտական գործոնների արժեքների հաշվարկ VBA (Ms Excel միջավայրում) լեզվով,**
- **տիպային ծրագրավորման փաթեթները կիրառելու տնտեսագիտական վերլուծություններում ու նախագծերի ավտոմատացման խնդիրներում:**

✓ *(ընդհանրական կարողություններ)*
- **կկարողանա տարբեր աղբյուրներից հայթայթելու տեղեկատվություն և վերլուծել, Կունենա տնտեսական ինֆորացիան մշակելու հիմնարար գիտելիքներ՝ հետագա մասնագիտական դասընթացները յուրացնելու համար:**

*Համառոտ բովանդակությունը*

***Թեմա 1***՝ Տնտեսական ինֆորմացիայի համակարգչային մշակման ծրագրային ապահովումը: ***Թեմա 2***՝ VBA ծրագրավորման լեզուն և նրա հիմնական տարրերը: ***Թեմա 3***՝ VBA լեզվի օպերատորները: ***Թեմա 4***՝ VBA պրոցեդուրաներ և ֆունկցիաներ: ***Թեմա 5***՝ VBA ֆինանսական, վիճակագրական, մաթեմատիկական ֆունկցիաների կիրառությունը տնտեսագիտական հետազոտություններում: ***Թեմա 6***՝ VBA-ն որպես օբյեկտային կողմնորոշմամբ ծրագրավորման լեզու: ***Թեմա 7***՝ Նախագծերի ավտոմատացումը ղեկավարման էլեմենտների միջոցով:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 - է:

*Հիմնական գրականության ցանկը*


1. Մ. Բունիաթյան, Գ. Ղուկասյան VBA ծրագրավորում տնտեսագետների համար, Երևան, 2005.
2. А.Гарнаев Excel, VBA, Internet в экономике и финансах, Санкт-петербург, 2002г.
3. С.В.Симонович Информатика базовый курс, учебник для ВУЗ-ов, 2000г.

| |
|---|
| 4. Дж.Уокенбах Професиональное програмирование на VBA в Excel. Москва, Санкт-Петербург, Киев, 2003г. |

| 0201/B04 | Տնտեսական պատմություն | 4 կրեդիտ |
|---|---|---|
| 4 ժամ | 32/0/32 | |
| 3-րդ կիսամյակ | Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց | |

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տարբեր պատմական ժամանակահատվածներում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև տնտեսության կարևորագույն ոլորտների, տնտեսական կացութաձևերի, տարբեր երկրների տնտեսությունների կազմակերպական ձևերի զարգացման գործընթացներին:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- **կիմանա մարդկային քաղաքակրթությունների տնտեսական զարգացման հիմնական օրինաչափությունները,**
- **ծանոթ կլինի տնտեսական բարեփոխումների պատմական փորձին,**
- **կիմանա առաջատար երկրների տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, տնտեսական առաջընթացի ապահովման կարևոր ուղղությունները:**

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **տնտեսական իրավիճակի վերլուծության ընթացքում համադրելու պատմական փաստերը և տեղեկատվությունը,**
- **տարբեր երկրների տնտեսությունների զարգացման առանձնահատկությունների համադրությամբ կատարելու որոշակի կանխատեսումներ:**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **կունենա անհրաժեշտ գիտելիքներ հետագա մասնագիտական դասընթացները յուրացնելու համար:**

*Համառոտ բովանդակությունը*

***Թեմա 1՝*** Տնտեսական պատմության դասընթացի ընդհանուր նկարագիրը: ***Թեմա 2՝*** Նախնադարյան – համայնական տնտեսակարգը: ***Թեմա 3՝*** Ստրկատիրական տնտեսակարգը: Արևելյան և Արևմտյան

| |
|---|
| ստրկությունը: ***Թեմա 4՝*** Ֆեոդալիզմի տնտեսակարգը: Արևմտյան Եվրոպայի, Ռուսաստանի և Ճապոնիայի տնտեսությունը միջնադարում: ***Թեմա 5՝*** Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և կապիտալիստական տնտեսակարգի ձևավորումը Արևմտյան Եվրոպայում: ***Թեմա 6՝*** Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ –ի, Ճապոնիայի և Ռուսաստանի տնտեսական զարգացումը 18-19 դդ.: ***Թեմա 7՝*** Մոնոպոլիստական կապիտալիզմի ձևավորումը տնտեսապես զարգացած երկրներում: ***Թեմա 8՝*** Աշխարհի առաջատար երկրների տնտեսությունը մինչպատերազմյան ժամանակաշրջանում: ***Թեմա 9՝*** Խորհրդային ամբողջատիրական տնտեսակարգի ձևավորումը: ***Թեմա 10՝*** Երկրորդ Համաշխարհային պատերազմի ազդեցությունը առաջատար տնտեսական զարգացման գործընթացում: ***Թեմա 11՝*** Համաշխարհային տնտեսական զարգացման միտումներն ու առանձնահատկությունները 20 –րդ դարի վերջին 21 –րդ դարի սկզբին: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>***Ընթացիկ քննություններ***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:<br>***Եզրափակիչ քննություն***<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: |
| *<u>Հիմնական գրականության ցանկը</u>*<br>1. Մ. Ռ. Եզիազարյան, Լ. Հ. Խաչատրյան, Ա. Ռ. Մարտիրոսյան, Ա. Հ. Հակոբջանյան, Ա. Պ. Խանդամիրյան, Տնտեսական պատմություն. Հարցեր և պատասխաններ: Ուսումնական ձեռնարկ, Երևան 2011:<br>2. Անանյան Լ., Պետրոսյան Լ., Տնտեսական պատմություն, Երևան 2005:<br>3. Անանյան Լ. Զ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Երևան, 2003:<br>4. История Экономики. Учебник для вузов/ Под ред. Конотопова М. В., Сметанина С. И., Москва: изд. “Академический Проект”, 2001.<br>5. “История мировой экономики”: Учебник для вузов/ Под ред. Г. Б. Поляка, А. Н. Марковой. Москва 2002. |

<table>
<tr><td>0101/B25</td><td>Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ</td><td>6կրեդիտ</td></tr>
<tr><td>6 ժամ</td><td colspan="2">48/48/0</td></tr>
<tr><td>3-րդ կիսամյակ</td><td colspan="2">Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ուսանողին ամփոփ և մատչելի ձևով ծանոթացնել գործույթների հետազոտման ժամանակակից մաթեմատիկական մոդելներին և դրանց լուծման եղանակներին, ինչպես նաև ուսումնասիրել որոշումների կայացման տիպային մոդելներ և լուծման եղանակներ:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• ծանոթ կլինի գործույթների հետազոտման ժամանակակից մաթեմատիկական մոդելներին և դրանց լուծման եղանակներին,<br>• կունենա անհրաժեշտ գիտելիքներ որոշումների կայացման տիպային մոդելների և լուծման եղանակների վերաբերյալ:<br>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• որոշելու հետազոտվող խնդրի (համակարգի) նպատակը, նկարագրելու այլընտրանքային լուծումները, սահմանելու վերջիններիս արդյունավետությունը,<br>• կառուցելու խնդրի մաթեմատիկական մոդելը և գտնելու լավագույն լուծումը համաձայն ընդունված նպատակի:<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• կկարողանա տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները կիրառել տնտեսագիտական խնդիրներում:</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակությունը<br>Թեմա 1՝ Գծային ծրագրավորում: Թեմա 2՝ Գների հավասարակշռության թեորեմ: Թեմա 3՝ Տրանսպորտի խնդիրը: Թեմա 4՝ Կարճագույն ճանապարհի խնդիրներ: Թեմա 5՝ Հոսքեր ցանցերում: Թեմա 6՝ Գործույթների հետազոտման խնդիրների լուծման դինամիկ ծրագրավորման մեթոդը: Թեմա 7՝ Խաղերի տեսություն:</td></tr>
<tr><td colspan="3">Գնահատման մեթոդները և չափանիշները<br>Ընթացիկ քննություններ<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում</td></tr>
</table>

| |
|---|
| է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:<br>***Եզրափակիչ քննություն***<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Մ. Սահակյան, Հ. Սարգսյան, Ս. Սարգսյան, Ռ. Տոնոյան, Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, մաս 1, Գործույթների հետազոտում, Կառավարման գիտություն, Երևան, 1997թ.<br>2. Մ. Սահակյան, Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, մաս 3, Գործույթների հետազոտումը տնտեսության կառավարման խնդիրներում, Խնդիրներ և վարժություններ, Երևան, 2001թ.<br>3. Գ. Տոնոյան, Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ, Գծային ծրագրում, Մաս 1, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2011<br>4. Хемди А.Таха, Введение в исследование операций, Москва, 2005.<br>5. Frederick S. Hillier, Gerald J. Lieberman, Introduction to operations research, Stanford University, Seventh Edition, Online book |

| **0101/B26** | **Հավանականություն և կիրառական վիճակագրություն** | **5 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **32/32/0** | |
| **3-րդ կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ հավանականությունների հիմնական գաղափարների և մաթ. վիճակագրության տարրերի մասին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **կտիրապետի հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության հիմնարար գիտելիքներին,**<br>• **կիմանա հավանականային հիմնական բանաձևերը:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* | | |

| |
|---|
| • **հաշվելու պատահույթի հավանականությունը, նրա բնութագրիչները,**<br>• **գնահատելու անհայտ պարամետրերը և կատարել վարկածների ստուգում:**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **կկարողանա հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության հիմնարար գիտելիքները կիրառելու տնտեսագիտական խնդիրներում:** |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>***Թեմա 1՝*** Հավանականային տարածություն: ***Թեմա 2՝*** Պատահական մեծություն և բաշխման ֆունկցիա: ***Թեմա 3՝*** Պատահական մեծությունների թվային բնութագրիչները: ***Թեմա 4՝*** Սահմանային թեորեմներ: ***Թեմա 5՝*** Պատահական պրոցեսներ: ***Թեմա 6՝*** Մաթեմատիկական վիճակագրության տարրերը: ***Թեմա 7՝*** Անհայտ պարամետրերի գնահատումը: ***Թեմա 8՝*** Վիճակագրական հիպոթեզների ստուգում: ***Թեմա 9՝*** Դիսպերսիոն անալիզ: ***Թեմա 10՝*** Կորելյացիոն անալիզ: ***Թեմա 11՝*** Էքսպերտային գնահատականների վիճակագրական անալիզ: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>***Ընթացիկ քննություններ***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:<br>***Եզրափակիչ քննություն***<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Калинина В. Н., Панкин В. Ф. Математическая статистика, Москва, Высшая школа, 1998,<br>2. Бочаров П. П., Печинкин А. В. Теория вероятностей. Математическая статистика, Москжа, Гардарика, 1998,<br>3. Айвазяк С. А., Мхитарян В. С. Прикладная статистика и основы эконометрии, Москва, Юнити, 1998.: |

<table>
<tr><td>0201/B11</td><td>Ազգային տնտեսություն</td><td>4 կրեդիտ</td></tr>
<tr><td>4 ժամ</td><td colspan="2">32/0/32</td></tr>
<tr><td>3-րդ կիսամյակ</td><td colspan="2">Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում իրականացվող տնտեսական և սոցիալական վերափոխումներին, ինչպես նաև ՀՀ տնտեսության կառուցվածքին, առանձնահատկություններին և ներկա մարտահրավերներին:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• կիմանա ազգային տնտեսության տեսակները,<br>• ծանոթ կլինի ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքին,<br>• կիմանա ազգային տնտեսության կարգավորման հիմնական ուղղությունները:<br>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• գնահատելու երկրի տնտեսական և գիտատեխնիկական ներուժը,<br>• վերլուծելու և մեկնաբանելու երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունը և դրա վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• կկարողանա տնտեսագիտական խնդիրները դիտարկելու ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային տնտեսական համակարգերում:</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակությունը<br>Թեմա 1՝ Ազգային տնտեսության էությունը և զարգացման հիմնախնդիրները: Թեմա 2՝ Ազգային տնտեսության տեսակները: Թեմա 3՝ Երկրի տնտեսական ներուժը: Թեմա 4՝ Երկրի գիտատեխնիկական ներուժը: Թեմա 5՝ ՀՀ արդյունաբերությունը, ճյուղային կառուցվածքը: Թեմա 6՝ ՀՀ գյուղատնտեսությունը: Թեմա 7՝ Արտադրական ենթակառուցվածքները ազգային տնտեսական համակարգում: Թեմա 8՝ Ներդրումային քաղաքականությունը: Թեմա 9՝ Զբաղվածության ապահովման համակարգը: Թեմա 10՝ Ազգային տնտեսության մրցունակությունը: Թեմա 11՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) ՀՀ-ում: Թեմա 12՝ Ազգային տնտեսության կարգավորումը: Թեմա 13՝</td></tr>
</table>

| |
|---|
| Ազգային տնտեսության սոցիալական հիմքերը: ***Թեմա 14՝*** ՀՀ տնտեսությունը համաշխարհային տնտեսական համակարգում: ***Թեմա 15՝*** Երկրիտնտեսական անվտանգությունը: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.<br>***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 - է: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Шулга В. А. Национальная экономика. Учебник 2002,<br>2. Савченко П. В. Национальная экономика Москва 2010.<br>3. Кошелев А. Н. Национальная экономика 2010 |

| | | |
|---|---|---|
| **0201/B30** | **Տնտեսական իրավիճակների մոդելավորում** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **32/32/0** | |
| **4-րդ կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց** | |
| Դասընթացի նպատակն է խորացնել ուսանողների գիտելիքները տնտեսագիտա-մաթեմատիկական մոդելավորման գործընթացի, սկզբունքների և մեթոդների վերաբերյալ, ձևավորել հմտություններ տնտեսության տարբեր ոլորտներում ու մակարդակներում մոդելավորման հնարավորությունների վերաբերյալ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **ծանոթ կլինի տնտեսա-մաթեմատիկական մոդելավորման գործընթացի հիմնարար սկզբունքներին և մեթոդներին,**<br>• **կիմանա տնտեսական տարբեր երևույթների և գործընթացների ուսումնասիրման համար կիրառվող հիմնական տնտեսա-մաթեմատիկական մոդելները:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **տարբեր տնտեսագիտական խնդիրների լուծման նպատակով** | | |

| |
|---|
| ընտրելու համապատասխան տնտեսագիտամաթեմատիկական մեթոդը և հիմնավորելու դրա կիրառման նպատակահարմարությունը,<br>• կոնկրետ տնտեսագիտական խնդիրների լուծման նպատակով մշակելու տնտեսամաթեմատիկական մոդելներ և դրանց կիրառմամբ կատարել համապատասխան հաշվարկներ:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• կունենա կոնկրետ տնտեսական իրավիճակներում որոշումների ընդունման ու հիմնավորման գիտելիքներ և հմտություններ: |
| ***Համառոտ բովանդակություն***<br>***Թեմա 1`*** Պատմական ակնարկ: Դասընթացի ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տնտեսա–մաթեմատիկական մոդելի հասկացությունը, մոդելների դասակարգումն ու հիմնական տիպերը, մոդելավորման փուլերը: ***Թեմա 2`*** Տրնտեսական աճի մոդելները: ***Թեմա 3`*** Արտադրության գծային մոդելներ: ***Թեմա 4`*** Ցանցային մոդելներ: ***Թեմա 5`*** Պաշարների կառավարման խնդիրները: ***Թեմա 6`*** Օպտիմալ կառավարման խնդիրը: ***Թեմա 7`*** Խաղային մոդելներ: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>***Ընթացիկ քննություններ***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:<br>***Եզրափակիչ քննություն***<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Տնտեսական իրավիճակների մոդելավորում (Ուսումնական ձեռնարկ): Եր., ԵՊՀ հրատ., 2009:<br>2. Красс М.С., Чупрынов Б. П. «Математические методы и модели». Санкт-Петербург, 2006 г.<br>3. Шикин Е. В., Чхартишвили А.Г. «Математические методы и модели в управлении». Москва, 2000 г.<br>4. Хемди А.Таха, Введение в исследование операций, Москва, 2005. |

<table>
<tr><td>0201/B12</td><td>Էկոնոմետրիկա - 1</td><td>2 կրեդիտ</td></tr>
<tr><td>2 ժամ</td><td colspan="2">16/16/0</td></tr>
<tr><td>4-րդ կիսամյակ</td><td colspan="2">Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ տնտեսագիտական հետազոտություններում էկոնոմետրիկ մեթոդների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• ծանոթ կլինի տնտեսագիտական հետազոտություններ կատարելու հիմնական էկոնոմետրիկ մեթոդներին:<br>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• համակարգչային փաթեթների կիրառությամբ գնահատելու իր կողմից ստեղծված մոդելների պարամետրերը,<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• պարզագույն էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ լուծելու մի շարք գործնական տնտեսագիտական խնդիրներ</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակությունը<br>Թեմա 1՝ Էկոնոմետրիկան որպես առարկա: Թեմա 2՝ Պարզագույն ռեգրեսիա: Թեմա 3՝ Բազմակի ռեգրեսիա:</td></tr>
<tr><td colspan="3">Գնահատման մեթոդները և չափանիշները<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.<br>1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:<br>2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 - է:</td></tr>
<tr><td colspan="3">Հիմնական գրականության ցանկը<br>1. В.П. Носко (2000) Эконометрика для начинающих, Институт переходного периода, М.<br>2. Кристофер Доугерти (1999) Введение в эконометрикуМ: ИНФРА-М, 1999<br>3. Damodar Gujarati (2004) Basic Econometrics, The McGraw-Hill Companies</td></tr>
</table>

<table>
<tr><td>0201/B07</td><td>Համաշխարհային տնտեսություն</td><td>4 կրեդիտ</td></tr>
<tr><td>4 ժամ</td><td colspan="2">32/0/32</td></tr>
<tr><td>4-րդ կիսամյակ</td><td colspan="2">Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել աշխարհի երկրների տնտեսությունների համապարփակ նկարագիրը, տալ տեղեկություններ տարբեր երկրների տնտեսությունների մասին:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<ul><li>ծանոթ կլինի աշխարհի երկրների տնտեսություններին և դրանց հիմնական առանձնահատկություններին,</li><li>կիմանա համաշխարհային տնտեսության բնորոշ գծերը, առանձնահատկությունները, ձևավորման նախադրյալները և զարգացման միտումները:</li></ul>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<ul><li>վերլուծելու երկրների դասակարգման չափանիշները,</li><li>տնտեսագիտական տարբեր հետազոտություններում հաշվի առնելու տարբեր երկրների տնտեսական զարգացման առանձնահատկությունները,</li><li>գնահատելու համաշխարհային տնտեսությունում կամ առանձին երկրներում ընթացող տնտեսական գործընթացների հնարավոր ազդեցությունը:</li></ul>✓ (ընդհանրական կարողություններ)<ul><li>կունենա կոնկրետ տնտեսական իրավիճակներում որոշումների ընդունման ու հիմնավորման գիտելիքներ և հմտություններ:</li></ul></td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակությունը<br>Թեմա 1՝ Համաշխարհային տնտեսությունը և դրա զարգացման փուլերը: Թեմա 2՝ Աշխատանքի միջազգային բաժանումը և կոոպերացումը: Թեմա 3՝ Արդիականության գլոբալ հիմնախնդիրները: Թեմա 4՝ Համաշխարհային տնտեսական աճի տեմպերն ու համամասնությունները: Թեմա 5՝ Միջազգային առևտուր: Թեմա 6՝ Միջազգային ֆինանսավորում: Թեմա 7՝ Աշխատուժի միջազգային միգրացիա: Թեմա 8՝ Միջազգային գիտատեխնիկական գործակցություն: Թեմա 9՝ Միջազգայաին ֆիրմաներ: Թեմա 10՝ Ազատ տնտեսական գոտիներ: Թեմա 11՝ Միջազգային տնտեսական ինտեգրացիան: Թեմա 12՝</td></tr>
</table>

| |
|---|
| Զարգացած երկրները համաշխարհային տնտեսության մեջ: ***Թեմա 13՝*** Զարգացող երկրները համաշխարհային տնտեսության մեջ: ***Թեմա 14՝*** Հայաստանի տնտեսության ինտեգրվածությունը համաշխարհային տնտեսության մեջ: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>***Ընթացիկ քննություններ***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:<br>***Եզրափակիչ քննություն***<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Авдокушин Е. Н. Международные экономические отношения. М. 2001.<br>2. Мировая экономика /под ред. А. С. Булатова. М. 2002.<br>3. Мировая экономика /под ред. И. П. Николаевой. М. 2000.<br>4. Семенов К. А. Международные экономические отношения. М. 2003.<br>5. Спиридонов И. П. Мировая экономика м. 2001.<br>6. Цыпин И. С., Весник В. Р. Мировая экономика. М. 2008. |

| **0201/B28** | **Գործավարություն օտար լեզվով** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **4-րդ կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց** | |
| Դասընթացի նպատակն է մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և ուսանողների մոտ մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների առավել զարգացումը: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **կտիրապետի օտար լեզվով բանավոր և գրավոր մասնագիտական խոսք կառուցելու հմտություններին:**<br>*Ունակ կլինի* | | |

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **կազմելու գործավարական փաստաթղթեր մասնագիտության բնագավառում,**
- **թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **կկարողանա ռուսաց լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը:**

***Համառոտ բովանդակությունը***

***Թեմա 1՝*** Քերականություն, մասնագիտական բառապաշար և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում: Գործնական էթիկա: ***Թեմա 2՝*** Փաստաթղթերի ձևակերպման կանոնների և գործավարության կազմակերպումը: ***Թեմա 3՝*** Կառավարման փաստաթղթային ապահովումը:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 - է:

***Հիմնական գրականության ցանկը***


1. М. В. Кирсанова, Ю.М. Аксенов <Курс делопроизводства> Москва – Новосибирск 2005г.
2. М. И. Басаков <Делопроизводства и корреспонденция>, учебное пособие, 2003г.
3. В. И Андреева <Делопроизводства. Организация и ведение>, Кно-Рус 2008г.


| **0303/B39** | **Տնտեսագիտական սոցիոլոգիա** | **3 կրեդիտ** |
|---|---|---|
| **3 ժամ** | **32/0/16** | |
| **4-րդ կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց** | |

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տնտեսությունում տեղի ունեցող սոցիալական գործընթացներին, երևույթներին և

հարաբերություններին, տնտեսագիտական համակարգի վրա դրանց ազդեցությանը, ինչպես նաև սոցիոլոգիական հետազոտությունների անցկացման հմտություններին:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- **կունենա սոցիալ-տնտական գործընթացների սոցիոլոգիական վերլուծության համար անհրաժեշտ հիմնարար գիտելիքներ,**
- **կիմանա սոցիոլոգիական տեղեկատվության տնտեսագիտական կիրառությունների վերաբերյալ:**

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **տնտեսագիտական հետազոտություններում կիրառելու սոցիոլոգիական մեթոդներ,**
- **գնահատելու սոցիալական տարբեր երևույթների ու գործընթացների հնարավոր տնտեսական հետևանքները:**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **կկարողանա տնտեսագիտական խնդիրները դիտարկել տարբեր տնտեսագիտական ուսմունքների համատեքստում:**

***Համառոտ բովանդակությունը***

***Թեմա 1՝*** Տնտեսագիտական սոցիոլոգիայի առարկան և մեթոդը: ***Թեմա 2՝*** Սոցիալական պետությունը և արդարության սկզբունքները: ***Թեմա 3՝*** Սոցիա-լական անհավասարությունը և հասարակական դասերի ստրատիֆիկացիոն հիմնական տեսությունները: ***Թեմա 4՝*** Սոցիալական շերտավորման հիմնախնդիրները տնտեսությունում: ***Թեմա 5՝*** Եկամուտների անհավասարությունը և այն պայմանավորող գործոնները: ***Թեմա 6՝*** Կենսամակարդակի և կյանքի որակի ցուցանիշները: ***Թեմա 7՝*** Աղքատության պատկերը. դրսևորման ձևերը և չափման եղանակները: ***Թեմա 8՝*** Գործազրկության և զբաղվածության սոցիալ-տնտեսական ասպեկտները: ***Թեմա 9՝*** Աշխատանքի սոցիալական կազմակերպմանհիմքերը: Թեմա ***10՝*** Սոցիալական քաղաքականության էությունը, առանձնահատկությունները ՀՀ-ում:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5

| |
|---|
| է: *2-րդ ստուգում.* Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 - է: |
| ***Հիմնական գրականության ցանկը*** <br>1. Экономическая социология Соколова Г.Н.,1998г., <br>2. Экономическая социология Радаев В.В.,2010, <br>3. Экономическая социология В. И. Верховин, В. И. Зубков,2005г. |

| **0201/B13** | **Վիճակագրություն** | **5 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **32/0/32** | |
| **4-րդ կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողին տալ վիճակագրական մեթոդների օգտագործման հմտություններ, ծանոթացնել օգտագործվող տնտեսական վիճակագրության ցուցանիշների համակարգին, կատեգորիաներին, հաշվարկման եղանակներին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*** <br>*Գիտելիք և իմացություն* <br>• **ծանոթ կլինի օգտագործվող տնտեսական վիճակագրության ցուցանիշների համակարգին, կատեգորիաներին, հաշվարկման եղանակներին:** <br>*Ունակ կլինի* <br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* <br>• **ինքնուրույն հավաքելու, ամփոփելու և վերլուծելու տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող վիճակագրական տվյալները,** <br>• **կատարելու վիճակագրական տվյալների համադրումներ և համեմատական վերլուծություններ:** <br>✓ *(ընդհանրական կարողություններ)* <br>• **կկարողանա իր տեսակետը հիմնավորել համապատասխան – փաստարկներով:** | | |
| ***Համառոտ բովանդակությունը*** <br>***Թեմա 1.*** Վիճակագրության առարկան, մեթոդը, խնդիրները և կազմակերպումը: ***Թեմա 2.*** Վիճակագրական դիտարկումներ: ***Թեմա 3.*** Վիճակագրական ամփոփում, աղյուսակներ, խնբավորումներ: Գրաֆիկական մեթոդը վիճակագրության մեջ: ***Թեմա 4.*** Ընդհանրացնող – | | |

| |
|---|
| վիճակագրական ցուցանիշներ: ***Թեմա 5.*** Միջին մեծություններ: ***Թեմա 6.*** Վարիացիայի ցուցանիշները: ***Թեմա7.*** Ընտրանքային դիտարկում: ***Թեմա 8.*** Դինամիկայի շարքեր, դրանց վերլուծությունը: ***Թեմա 9.*** Ինդեքսներ, ինդեքսային մեթոդ: ***Թեմա10.*** Փոխկապվածությունների վիճակագրական ուսումնասիրությունը: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>***Ընթացիկ քննություններ***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:<br>***Եզրափակիչ քննություն***<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Պետրոսյան Ա. Ն., Վիճակագրության տեսության հիմնական բանաձևերը, տեղեկատու, Երևան, 2004.<br>2. Պետրոսյան Ա. Ն. Վիճակագրության ընդհանուր տեսություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009.<br>3. Шмойлова Р. А., Минашкин В. Г., Садовникова Н. А., Шувалова Е. Б., Теория статистики. М., <Финансы и статистика>, 2003 |

| 0101/B21 | Համակարգչային պրակտիկում | 3 կրեդիտ |
|---|---|---|
| 3 ժամ | 0/48/0 | |
| 4-րդ կիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | |
| Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տնտեսական գործընթացների և մենեջմենթի խնդիրների համակարգչային մոդելավորման հմտություններ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **ծանոթ կլինի ծրագրային փաթեթների միջոցով տնտեսական գործընթացների մոդելավորման և վերլուծության սկզբունքներին և դրանց կիրառություններին:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* | | |

| |
|---|
| • **կիրառելու MS Excel կիրառական փաթեթի ընդլայնված հնարավորությունները,**<br>• **MS Excel կիրառական փաթեթով լուծելու մասնագիտական այլ դասընթացներում ձևակերպված տնտեսագիտական խնդիրները:**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **կունենա տնտեսագիտական խնդիրները համակարգչային փաթեթներով լուծելու հմտություններ:** |
| *Համառոտ բովանդակությունը*<br>***Թեմա 1՝*** MS Excel կիրառական փաթեթի ընդլայնված հնարավորությունները: ***Թեմա 2՝*** Մենեջմենթի և մարքետինգի խնդիրների լուծումը MS Excel-ում: ***Թեմա 3՝*** Տնտեսական իրավիճակների մոդելավորումը MS Excel-ում: ***Թեմա 4՝*** Տվյալների բազաների վերլուծությունը MS Excel-ում: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.<br>***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 - է: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Л.А. Анеликова Лабораторные работы по Excel, М., 2006. |

| | | |
|---|---|---|
| **0201/B05** | **Տնտեսագիտական մտքի պատմություն** | **6 կրեդիտ** |
| **6 ժամ** | **48/0/48** | |
| **5-րդ կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ժամանակակից տնտեսագիտական տեսությունների ձևավորման պատմությանը, ինչպես նաև օգնել առավել համակողմանի ըմբռնելու և յուրացնելու այդ տեսությունների շրջանակներում քննարկվող տնտեսական երևույթներն ու գործընթացները: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*** | | |

*Գիտելիք և իմացություն*

- **ծանոթ կլինի տնտեսագիտության զարգացման և տնտեսագիտական տեսությունների ձևավորման պատմությանը,**
- **կիմանա ժամանակակից հայտնի տնտեսագիտական ուսմունքների հիմնական մոտեցումները:**

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **տնտեսական տարբեր հիմնախնդիրները վերլուծել և մեկնաբանել տնտեսագիտական տարբեր ուղղությունների տեսանկյունից,**
- **կատարելու տարբեր տնտեսագիտական տեսությունների համեմատական վերլուծություն:**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **կկարողանա տնտեսագիտական խնդիրները դիտարկել տարբեր տնտեսագիտական ուսմունքների համատեքստում:**

***Համառոտ բովանդակությունը***

***Թեմա 1՝*** Տնտեսագիտական պատկերացումները ավանդական հասարակություններում: ***Թեմա 2՝*** Դասական քաղաքատնտեսության սկիզբը: ***Թեմա 3՝*** Ա. Սմիթը և նրա «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատությունը: ***Թեմա 4՝*** Սեյի շուկաների հայեցակարգը և իրացման տեսությունը: ***Թեմա 5՝*** Ռիկարդոյի քաղաքատնտեսական համակարգը: ***Թեմա 6՝*** Ջոն Ստյուարտ Միլը և նրա աշխատությունը: ***Թեմա 7՝*** Կ. Մարքսի «Կապիտալը»: ***Թեմա 8՝*** Պատմական ուղղությունը քաղաքատնտեսության մեջ: ***Թեմա 9՝*** Մարժինալիստական հեղափոխությունը: ***Թեմա 10՝*** Մարշալյան տնտեսագիտական տեսությունը: ***Թեմա 11՝*** Ինստիտուցիոնալիզմ: ***Թեմա 12՝*** Քեյնսի տեսությունը: ***Թեմա 13՝*** Նոր պահպանողական տեսությունները: ***Թեմա 14՝*** Անցման ժամանակաշրջանի հիմնահարցերը:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն ար-

| |
|---|
| ժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Գ. Ս. Գալստյան, Ա. Ռ. Մարտիրոսյան, Կ. Ռ. Ավետիսյան, Մ. Ռ. Եղիազարյան, Ա. Հ. Հակոբջանյան, Հ. Գ. Մարգարյան, Ա. Ռ. Ներսիսյան, Տնտեսագիտական մտքի պատմություն, Երևան 2009:<br>2. Ядгаров Я. С., История экономических учений, Москва 2009.<br>3. Блауг М. Методология экономической науки.М.2004.<br>4. Блауг. М. Экономическая мысль в ретроспективе.М.1994.<br>5. Galbraith J. History of Economics. The past and present. London. 1987. |

| **0201/B08** | **Միջազգային տնտեսագիտություն** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **32/0/32** | |
| **5-րդ կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց** | |
| Դասընթացի նպատակն է ուսումնասիրել միջազգային առևտրի ու միջազգային ֆինանսների հիմնական տեսությունները և ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ միջազգային առևտրի և ֆինանսների ոլորտում տեղի ունեցող գործընթացները վերլուծելու և դրանց հնարավոր ազդեցությունները գնահատելու համար: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **ծանոթ կլինի միջազգային առևտրի և միջազգային ֆինանսների հիմնական տեսություններին,**<br>• **կիմանա միջազգային առևտրի և արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու հասկացությունները:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **վերլուծելու միջազգային առևտրի և ֆինանսների ոլորտում տեղի ունեցող գործընթացները,**<br>• **գնահատելու դրանց հնարավոր ազդեցությունները երկրի տնտեսության վրա:**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **կկարողանա տնտեսագիտական խնդիրները դիտարկելու համաշխարհային առևտրի և միջազգային շուկաների:** | | |

| |
|---|
| *Համառոտ բովանդակությունը*<br>***Թեմա 1՝*** Ներածություն: ***Թեմա 2՝*** Առևտրատնտեսական տեսություն-ների և հայացքների առաջացումը: ***Թեմա 3՝*** Համաշխարհային տըն-տեսության վերաբերյալ տեսությունների ձևավորումը: ***Թեմա 4՝*** Հա-մաշխարհային տնտեսության աճը և ռեսուրսների շուկա: ***Թեմա 5՝*** Աշխատանքային ռեսուրսների միգրացիա: ***Թեմա 6՝*** Կապիտալի շարժը համաշխարհային տնտեսությունում: ***Թեմա 7՝*** Վճարային հաշվեկշռի էությունը և կառուցվածքը: ***Թեմա 8՝*** Հովանավորչական քաղաքականություն: ***Թեմա 9՝*** Ոչ մաքսային քաղաքականություն: ***Թեմա 10՝*** Միջազգային արժութային համակարգի ձևավորումը: ***Թե-մա 11՝*** Միջազգային դրամավարկային կազմակերպություններ: ***Թե-մա 12՝*** Տնտեսական քաղաքականությունը բաց տնտեսության պայ-մաններում: ***Թեմա 13՝*** Գլոբալիզացիան և համաշխարհային տնտե-սությունը: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>***Ընթացիկ քննություններ***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրա-քանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:<br>***Եզրափակիչ քննություն***<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն ար-ժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Թ. Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն. առևտուր և ֆի-նանսներ, (2-րդ հրատ.), Երևան, 2005:<br>2. Ю. Киреев, Международная экономика, в 2 частях, М., Владос, Ч1 1999, Ч2 2001,<br>3. Steven Husted, Michael Melvin, International Economics, (7th ed.), Prentice Hall, 2006.<br>4. P. Krugman, M. Obstfeld, International Economics: Theory and Policy, (8th Int. ed.), Addison-Wesley Longman, 2008. |

| | | |
|---|---|---|
| **0201/B09** | **Միկրոտնտեսագիտություն** | **6 կրեդիտ** |
| **6 ժամ** | **48/0/48** | |

| 5-րդ կիսամյակ | Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց |
| --- | --- |
| Դասընթացն իրենից ներկայացնում է տնտեսագիտական տեսության միկրոտնտեսագիտություն բաժնի երկրորդ (խորացված) մակարդակը: Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել առավել խորացված և մաթեմատիկորեն հիմնավորված գիտելիքներ միկրոտընտեսագիտական հասկացությունների և օրինաչափությունների վերաբերյալ, ինչպես նաև սովորեցնել մաթեմատիկական մոդելների և մեթոդների կիրառմամբ վերլուծել սպառողների և ձեռնարկությունների վարքը, հավասարակշռության և օպտիմումի ձևավորման խնդիրները շուկայական տարբեր մոդելների շրջանակներում: | |
| *Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **ծանոթ կլինի միկրոտնտեսական հիմնական հասկացություններին և օրինաչափություններին,**<br>• **կիմանա սպառողական վարքի և ֆիրմայի տեսությունները,**<br>• **ծանոթ կլինի շուկայական տարբեր մոդելներում հավասարակշռության և օպտիմալության ձևավորման մեխանիզմներին:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **կոնկրետ տվյալների կիրառմամբ լուծելու սպառողի օգտակարության մաքսիմալացման, ձեռնարկության արտադրանքի ծավալի մաքսիմալացման, ծախքերի մինիմալացման, շահույթի մաքսիմալացման և այլ տիպային տնտեսագիտամաթեմատիկական խնդիրներ,**<br>• **կանխատեսելու և մեկնաբանելու տարբեր երևույթների ու գործընթացների հնարավոր ազդեցությունը տնտեսական սուբյեկտների վարքագծի վրա:**<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• **ստացած գիտելիքները կարող են արդյունավետ բազա լինել ճշգրիտ ինֆորմացիայի հավաքագրման, ռացիոնալ մշակման և պետական կառավարման մարմիններին այն տրամադրման համար:** | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>***Թեմա 1՝*** Օգտակարության մաքսիմալացման և ծախսերի մինիմալացման խնդիրները, դրանց կապը: ***Թեմա 2՝*** Անուղղակի օգտակարության ֆունկցիան և ծախսերի ֆունկցիան: ***Թեմա 3՝*** Վալրասի հա- | |

| |
|---|
| վասարակշռությունը, բարեկեցության թեորեմները: ***Թեմա 4՝*** Փոխարինման և եկամտի էֆեկտները, Սլուցկու հավասարումը: ***Թեմա 5՝*** Փոխհատուցված և համարժեք վարիացիա, սպառողի ավելցուկը: ***Թեմա 6՝*** Ծախսերի մինիմալացման խնդիրը, ռեսուրսների պայմանական պահանջարկի ֆունկցիաները, ծախսերի երկրաչափությունը: ***Թեմա 7՝*** Շահույթի մաքսիմալացման խնդիրը, թողարկման առաջարկը և ռեսուրսների պահանջարկը: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները*** <br> ***Ընթացիկ քննություններ*** <br> Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր: <br> ***Եզրափակիչ քննություն*** <br> Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: |
| ***Հիմնական գրականության ցանկը*** <br> 1. Хелл. Вариан. Микроэкономика. Промижуточный уровен. Современный подход. Изд. "Юнити", М.1997. <br> 2. Д. Хайман. Современная микроэкономика: анализ и применение. <Финансы и статистика>, М., 1992. <br> 3. Brian R. Binger, Elizabeth Hoffman. Microeconomics with Calculas.1998. <br> 4. Тарасевич Л. С., Гребенников П. И., Леусский А. И. Микроэкономика. Москва, Юрайт 2006. <br> 5. Andreu Mas-Collel, Michael D.Whinston, Jery R Green. “Microeconomic Theory”, Oxford University Press, 1995. |

| | | |
|---|---|---|
| **0201/B27** | **Էկոնոմետրիկա - 2** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **32/32/0** | |
| **5-րդ կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ տնտեսագիտական հետազոտություններում էկոնոմետրիկ մեթոդների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*** | | |

*Գիտելիք և իմացություն*

- կյուրացնի տնտեսագիտական հետազոտություններ իրականացնելու վիճակագրական մոտեցումները,

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- վիճակագրական մեթոդների օգնությամբ ստուգելու մոդելների համապատասխանության վերաբերյալ տարբեր վարկածներ

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կկարողանա տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և դրանց հիման վրա կատարել տնտեսագիտական վերլուծություններ:

***Համառոտ բովանդակությունը***

***Թեմա 1*** ՝ Ժամանակային շարքեր: ***Թեմա 2*** ՝ Ստացիոնար ժամանակային շարքեր: ***Թեմա 3*** ՝ Միաժամանակյա էկոնոմետրիկական հավասարումների համակարգեր: ***Թեմա 4*** ՝ SPSS փաթեթի հնարավորությունները և կիրառությունը էկոնոմետրիկական խնդիրները լուծելիս: ***Թեմա 5*** ՝ Տնտեսական ինֆորմացիայի կազմակերպական կառուցվածքները և դրանց ձևափոխությունները:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

***Հիմնական գրականության ցանկը***


1. И. И. Елисеева и др. Эконометрика, М., 2005
2. Я. Р. МАГНУС и др., Эконометрика, М., 2000
3. Enders, W. (2004) Applied Econometric Time Series, John Wiley & Sons, Inc., New York.
4. Bruce E. Hansen (2012) Econometrics, University of Wisconsin

| | | |
|---|---|---|
| 0201/B14 | Ծառայությունների ոլորտի է-կոնոմիկա | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 16/0/16 | |
| 5-րդ կիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | |

Դասընթացի նպատակն է յուրացնել ծառայությունների ոլորտի ճյուղերում շուկայական տնտեսության անցման տնտեսավարման, ձեռներեցության, տնտեսական միջոցառումների իրականացման նոր պայմանների ներդրման պրակտիկան:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- կունենա տեսական և գործնական գիտելիքներ շուկայական տնտեսության պայմաններում ծառայությունների ոլորտում տնտեսական գործունեության վերաբերյալ,
- ծանոթ կլինի ծառայությունների ոլորտի առանձնահատկություններին:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ստացած ընդհանուր մասնագիտական գիտելիքները տեղայնացնելու ծառայությունների ոլորտի հիմնախնդիրների լուծման նպատակով,
- վերլուծելու ծառայությունների ոլորտի ձեռնարկությունների տնտեսական գործունեությունը և ներկայացնելու կոնկրետ առաջարկություններ:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կարողանա ընդհանուր մասնագիտական գիտելիքները տեղայնացնել և կիրառել առանձին ոլորտների հիմնահարցերն ուսումնասիրելիս:

*Համառոտ բովանդակությունը*

***Թեմա 1՝*** Ծառայությունների ոլորտը: Զարգացման գործոնները, ռեսուրսային պոտենցիալը: ***Թեմա 2՝*** Շուկան և ձեռնարկատիրական գործունեությունը ծառայությունների ոլորտում: ***Թեմա 3՝*** Սեփականության ձևերը և սեփականաշնորհումը ծառայությունների ոլորտում: ***Թեմա 4՝*** Ծառայությունների ոլորտի զարգացման պետական կարգավորումը: ***Թեմա 5՝*** Մարքեթինգը ծառայությունների ոլորտում: ***Թեմա 6՝*** Կրթությունը և հմտությունը շուկայի պայմաններում: ***Թեմա 7՝*** Մշակույթի և տուրիզմի ծառայությունների շուկան:

| |
|---|
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.<br>***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. А. М. Бабич, Е. Н. Жильцов, Е. В. Егоров; Социальная сфера в условиях перехода к рынку. М., РАУ, 1993.<br>2. И. К. Андреева; Рынок баз и банков данных. Информационные ресурсы Росии. 1993.<br>3. А. М. Бабич, Е. Б. Егоров; Экономика и финансирование социально-культурной сферы. Казань, 1996.<br>4. Менеджмент в сфере услуг. Под. ред. В. Ф, Уколова, М., Луч, 1995. |

| | | |
|---|---|---|
| **0201/B15** | **Ագրարային սեկտորի էկոնոմիկա** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **32/0/32** | |
| **6-րդ կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց** | |
| Դասընթացի նպատակն է ներկայացնել ագրարային սեկտորի առանձնահատկություններն ու հիմնախնդիրները, տարբեր երկրների (ԱՄՆ, ԵՄ, ՌԴ և այլն) ագրարային սեկտորների վերլուծության հիման վրա ուսանողին ծանոթացնել զարգացած երկրների ժամանակակից փորձին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **կիմանա ագրարային սեկտորի առանձնահատկությունները, ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով,**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• **ստացած ընդհանուր մասնագիտական գիտելիքները տեղայնացնելու ագրարային սեկտորի հիմնահարցերն ուսումնասիրելիս,**<br>• **վերլուծելու ագրարային սեկտորի ձեռնարկությունների** | | |

**տնտեսական գործունեությունը և ներկայացնելու կոնկրետ առաջարկություններ:**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **կարողանա ընդհանուր մասնագիտական գիտելիքները տեղայնացնելու և կիրառել առանձին ոլորտների հիմնահարցերն ուսումնասիրելիս**:

*Համառոտ բովանդակությունը*

